Նախագահ
Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական

Սրտանց կիսվել ավետարանով

Աստված պատրաստված մարդիկ կդնի Իր պատրաստված ծառաների ճանապարհին, ովքեր ուզում են կիսվել ավետարանով: Դա պատահել է ձեր իսկ կյանքում: Թե որքան հաճախ դա կպատահի, կախված է ձեր մտքի և սրտի պատրաստվածությունից:

Ես մի ընկեր ունեմ, ով աղոթում է ամեն օր, որ հանդիպի մեկին, ով պատրաստ է ընդունելու ավետարանը: Նա իր հետ վերցնում է Մորմոնի Գրքի մի օրինակ: Մի կարճ ճանապարհորդությունից առաջ նա երեկոյան որոշեց իր հետ չվերցնել մի օրինակ, այլ դրա փոխարեն վերցնել քարտ, որը փոխանցում են ուրիշներին: Սակայն, հենց նա պատրաստվում էր դուրս գալ, հոգևոր հուշում է ստանում. «Վերցրու քեզ հետ Մորմոնի Գիրքը»: Նա մի օրինակ դրեց իր պայուսակի մեջ:

Երբ մի կին, ում նա ճանաչում էր, ճանապարհորդության ժամանակ նստեց իր կողքին, նա մտածեց. «Արդյոք նա՞ է»: Նա կրկին իր կողքին էր նստած ետադարձի ճանապարհին: Նա մտածեց. «Ինչպե՞ս խոսակցություն բացեմ ավետարանի շուրջ»:

Հանկարծ, կինը ասաց նրան. «Դուք տասանորդ եք վճարում ձեր եկեղեցում, այնպես չէ՞»: Նա ասաց այո: Կինն ասաց, որ նա պետք է տասանորդ վճարեր իր եկեղեցում, սակայն չէր վճարում: Այնուհետև նա հարցրեց. «Ի՞նչ կարող ես ինձ ասել Մորմոնի Գրքի մասին»:

Նա բացատրեց, որ գիրքը սուրբ գրություն է՝ ևս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին, թարգմանված Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից: Երևում էր, որ դա հետաքրքրեց կնոջը, ուստի նա վերցրեց իր պայուսակը և ասաց. «Ես ոգեշնչում ստացա բերել ինձ հետ այս գիրքը: Ես կարծում եմ, որ այն ձեզ համար է»:

Նա սկսեց կարդալ այն: Երբ նրանք բաժանվում էին, կինն ասաց. «Ես և դուք դեռ կզրուցենք սրա մասին»:

Այն, ինչ իմ ընկերը չէր կարող իմանալ, սակայն Աստված *գիտեր*, այն էր, որ կինը փնտրում էր եկեղեցի: Աստված գիտեր, որ կինը հետևում էր իմ ընկերոջը և մտածում, թե ինչու էր նրա եկեղեցին նրան այդքան երջանիկ դարձնում: Աստված գիտեր, որ նա կհարցներ Մորմոնի Գրքի մասին և որ նա կկամենար ուսուցանվել միսիոներների կողմից: Նա պատրաստված էր: Իմ ընկերը նույնպես: Դուք և ես նույնպես կարող ենք պատրաստված լինել:

Պատրաստությունը, որի կարիքը մենք ունենք, գտնվում է մեր մտքում և մեր սրտում: Կինը լսել էր և հիշել բառեր Մորմոնի Գրքի, Տիրոջ վերականգնված Եկեղեցու և Աստծուն տասանորդ վճարելու մասին: Եվ նա իր սրտում զգացել էր ճշմարտության վկայության սկիզբը:

Տերն ասել է, որ Նա կհայտնի մեզ ճշմարտությունը Սուրբ Հոգով՝ մեր մտքում և մեր սրտում (տես

ՎԵՐՈՒ 8.2)։ Ձեզ հանդիպած մարդկանցից շատերը գտնվում են այդ նախապատրաստության սկզբում։ Նրանք լսել կամ կարդացել են Աստծո և Նրա խոսքի մասին։ Եթե նրանց սրտերը բավականաչափ փափուկ են, նրանք զգացել են, միգուցե և թեթևակի, ճշմարտության հաստատումը։

Կինը պատրաստված էր։ Իմ ընկերը նույնպես՝ Վերջին Օրերի Սուրբ, ով ուսումնասիրել էր Մորմոնի Գիրքը։ Նա զգացել էր վկայությունը, որ այն ճիշտ է, և նա նկատել էր Հոգու առաջնորդությունը, որ վերցներ մի օրինակ իր հետ։ Նա պատրաստված էր իր մտքում և իր սրտում։

Աստված պատրաստում է մարդկանց ընդունելու վերականգնված ճշմարտության վերաբերյալ ձեր վկայությունը։ Նա պահանջում է ձեր հավատքը և հետո ձեր գործը, որ անվախ կիսվեք նրանով, ինչը դարձել է շատ թանկ ձեզ համար և նրանց համար, ում դուք սիրում եք։

Պատրաստվեք, որ կիսվեք, ամեն օր ձեր միտքը լցնելով ավետարանի ճշմարտություններով։ Եթե դուք պահեք պատվիրանները և պատվեք ձեր ուխտերը, դուք կզգաք Հոգու վկայությունը և ավելի շատ սեր Փրկչի կողմից ձեր և նրանց հանդեպ, ում դուք հանդիպում եք։

Եթե դուք անեք ձեր մասը, դուք շարունակաբար մարդկանց հանդիպելու հրաշալի փորձառություն կունենաք, ովքեր պատրաստված են լսելու ճշմարտության մասին ձեր վկայությունը, որը տրվում է սրտից սրտին՝ ձեր սրտից նրանց սրտին։

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Խորհեք ուղերձը ընտանիքի հետ միասին կարդալու և պարբերություն առ պարբերություն մինչև վերջ քննարկելու վերաբերյալ, որտեղ Նախագահ Այրինգը քննարկում է եղանակներ մարդու վկայությունը ամրացնելու մասին։ Ընտանիքի հետ միասին քննարկեք ավետարանով կիսվելիս վկայություն բերելու կարևորությունը։ Ընտանիքի երեխաներին կարող է օգնել դերակատարումը, թե ինչպես վկայություն բերել ընկերներին։

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Իմանալ, թե ինչ ասել

Եթե դուք զգում եք, թե բավականաչափ գիտելիք չունեք ավետարանի վերաբերյալ, որպեսզի կիսվեք դրանով ուրիշների հետ, թող ձեզ հանգստություն բերեն սուրբ գրությունների այս խոստումները.

«Բարձրացրեք ձեր ձայնը դեպի այս ժողովուրդը. ասեք այն մտքերը, որոնք ես կդնեմ ձեր սրտերում, և դուք ամոթով չեք մնա մարդկանց առաջ.

Քանզի այն նույն ժամին, այո, այն նույն պահին տրվելու է ձեզ, թե ինչ պիտի ասեք» (ՎԵՐՈՒ 100.5–6)։

«Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկէ իմ անունովը, նա ամեն բան կսովորեցնէ ձեզ, և կհիշեցնէ ձեզ ամեն ինչ որ ձեզ ասեցի» (Հովհաննես ԺԴ.26)։

Սրանք մեծ խոստումներ են, սակայն դրանք ստանալու համար մենք պետք է անենք մեր մասը։ Այս ուղերձում Նախագահ Այրինգը ուսուցանել է մեզ, թե ինչպես «պատրաստվեք, որ կիսվեք [ավետարանով], ամեն օր ձեր միտքը լցնելով ավետարանի ճշմարտություններով»։ Ի՞նչ կարող եք դուք անել, որպեսզի լցնեք ձեր միտքը ավետարանի ճշմարտություններով։

ԵՐԵԽԱՆԵՐ

Պատրաստվեք կիսվել

Նախագահ Այրինգն ասում է, որ ավետարանով կիսվելու համար նախապատրաստվելու կարևոր ճանապարհներից է մեր միտքը ավետարանի ճշմարտություններով լցնելը։ Ի՞նչ կարող եք դուք անել, որ նախապատրաստվեք կիսվելուն։

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են։ Տպագրված է ԱՄՆ-ում։Անգլերենի հաստատումը. 6/11։ Թարգմանության հաստատումը. 6/11։ *First Presidency Message, September 2012*-ի թարգմանությունը։ Armenian 10369 201

Հատուկ կարիքներ և մատուցված ծառայություն

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

«Կարիքավորներն ամենուր են,- ասել է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, - և մեզանից յուրաքանչյուրը կարող է ինչ-որ բան անել ինչ-որ մեկին օգնելու համար: . . . Եթե մենք մեզ չկորցնենք ուրիշներին ծառայելու մեջ, մեր կյանքում քիչ նպատակ կլինի»:[1]

Որպես այցելող ուսուցիչներ մենք կարող ենք անկեղծորեն սիրել և ճանաչել յուրաքանչյուր քրոջ, ում այցելում ենք: Նրանց համար ծառայությունը, ում մենք այցելում ենք, ակամայից կբխի նրանց հանդեպ մեր սիրուց (տես Հովհաննես ԺԳ.34–35):

Ինչպե՞ս մենք կարող ենք իմանալ մեր քույրերի հոգևոր և նյութական կարիքների մասին, որպեսզի մենք կարողանանք անհրաժեշտության դեպքում ծառայություն մատուցել: Որպես այցելող ուսուցիչներ մենք կանչված ենք ստանալու ոգեշնչում, երբ մենք աղոթենք նրանց համար, ում մենք այցելում ենք:

Մեր քույրերի հետ մշտական կապ հաստատելը նույնպես կարևոր է: Անձամբ այցելելը, հեռախոսազանգերը, քաջալերող երկտողերը, է-փոստով նամակագրությունը, միահսն նստելը, անկեղծ հաճոյախոսելը, եկեղեցում օգնության հասնելը, հիվանդության կամ կարիքի պահին օգնելը և այլ ծառայությունները, բոլորը օգնում են մեզ հոգ տանել և ամրացնել միմյանց:[2]

Այցելող ուսուցիչներին խնդրում են զեկուցել քույրերի բարօրության և հոգևոր կարիքների մասին, և նրանց մատուցված ծառայության մասին: Նմանատիպ զեկույցները և մեր քույրերին մատուցած մեր ծառայությունը օգնում են մեզ ցուցադրել մեր աշակերտությունը:[3]

Սուրբ գրություններից

Հովհաննես Ժ.14–16, 3 Նեփի 17.7, 9, Մորոնի 6.3–4

Մեր պատմությունից

Իրար ծառայելը միշտ եղել է այցելությամբ ուսուցանելու հենց սրտում: Շարունակաբար մատուցվող ծառայության շնորհիվ մենք բերում ենք բարություն և ընկերություն, որ ավելին են, քան ամենամսյա այցելությունները: Մեր հոգատարությունն է, որ կարևոր նշանակություն է ստանում:

«Իմ ցանկությունն է աղերսել մեր քույրերին, որ դադարեն հեռախոսազանգի կամ ամսեկան այցելությունների համար անհանգստանալ»,- ասել է Մերի Էլեն Սմութը՝ Սփոփող Միության 13-րդ գերագույն նախագահը: Նա խնդրել է մեզ «դրա փոխարեն կենտրոնանալ նրբագեղ հոգիների համար հոգ տանելու վրա»:[4]

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը (1895–1985) ուսուցանել է. «Կարևոր է, որ մենք ծառայենք իրար թագավորությունում»: Սակայն նա նկատել է, որ ոչ բոլոր ծառայությունները պետք է հերոսական լինեն: «Շատ հաճախ մեր ծառայությունները բաղկացած են հասարակ քաջալերանքից կամ առօրյա գործերում օգնություն ցուցաբերելուց,- ասել է նա,- սակայն ինչպիսի փառահեղ հետևանքներ կարող են բխել . . . փոքր, սակայն կշռադատված գործերից»:[5]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Ս. Մոնսոն, «Ի՞նչ եմ ես արել ինչ-որ մեկի համար այսօր», *Լիահոնա,* նոյեմբեր, 2009, 84:
2. Տես *Handbook 2: Administering the Church* (2010), 9.5.1:
3. Տես *Handbook 2,* 9.5.4:
4. Mary Ellen Smoot, in *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 117.
5. *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* (2006), 82.

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ես փնտրու՞մ եմ անձնական ոգեշնչում, որպեսզի իմանամ, թե ինչպես արձագանքեմ յուրաքանչյուր քրոջ հոգևոր և նյութական կարիքներին, ում համար ինձ հանձնարարված է հոգ տանել:

2. Ինչպե՞ս կարող են քույրերը, ում համար ես հոգ եմ տանում, իմանալ, որ ես մտահոգվում եմ իրենց և իրենց ընտանիքների համար:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում:Անգլերենի հաստատումը. 6/11: Թարգմանության հաստատումը. 6/11: Visiting Teaching Message, September 2012-ի թարգմանությունը: Armenian 10369 201